



ԱՏԱՐԿՈՒՄ

2

ԼԱՊԵՏ
ԻՂԱՐԻՏ

ԿԱՅՊԵՏԿՐԱՏ



23747

Suprunt.

Suprunt L. Suprunt

ՄՈՂՈՄՈՆ ՏԱՐՈՆՑԻ

ԱՍՊԵՏ ԼԻՊԱՐԻՏ

(ՊԱՏՄԱԿԱՆ ՊՈՆԵՄ ԿԻԼԻԿՅԱՆ ՇՐՋԱՆԻՑ)

Խմբագրեց՝ աղագեմիկոս
ԱԳ.ԵՏԻՐ ԻՍԱՀԱԿՅԱՆ

23247

1333

A
I
9474



Հ Ա Յ Պ Ե Տ Շ Ր Ա Տ

ՀԼԿԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ 1944

Հիշե՛ք նրանց, որ դարեդար
Պաշտպանել են հացն ու գինին.
Պաշտպանել են հողը արդար,
Պաշտպանել են սուրբ Հայրենին:

Հայրենին է թանգն ամենքից.
Հիշեք նրան՝ դուք ձեր օրում,
Ով առավել իրեն կլանքից
Հայրենի՛ն է սրտանց սիրում:

Արդ՝ լսե՛ք ինձ, իմ հեռնորդների,
Երգս գրված մազաղաթին.
Փնօք տանք, հիշե՛նք նախնիքը մեր,
Հիշե՛նք Ասպետ Լիպարիտին:

Ելավ Մանչակը խելահեղ,
Զորքին կապեց զենք ու զրահ,
Ու հանց գարնան սղփոր հեղեղ՝
Գրոհ տվեց Սսի վրա:

Եկավ կանգնեց Սսի դիմաց—
Վաթսուն հազար զինված մարդով,—
Վաթսուն հազար նիզակ առած,
Վաթսուն հազար անեղ-նետով:

— Դուրս եկ, կովե՛նք, արքադ Հայոց,
Գոռաց Մանչակ թուրք ամիրան:
Ու քջեց ձին կրակ ու բոց,
Հասավ մինչև բերդի բերան:

Կոստանդինը դողաց, սարսեց,
Մթնեց աչքում երկինք-գետին,
Եվ ընկըճված. հայցով նայեց
Քաջ զորավար Լիսյարիտին:

— Վերև աստված, ներքևը դ՞ն,
Զորավիգ ես եղեի միշտ ինձ.
Ազատիր մեզ՝ արջունարբու
Տարսոնի թուրք ամիրայից:—

Քեզ եմ դիմում, իմ զորավար,
Քաջ թորոսի հզոր որդի.
Քաջ վասիլի ազնիվ եղբայր,
Ցույց տուր ուժը քո մեծ սրտի:

Պճնել է փառքըդ—Կիլիկյան,
Ամեն պալատ ու ամեն բերդ.
Ամեն ավան ու շահաստան,
Ամեն անտառ ու ամեն գետ:

Լիպարիտը ծնկեց խոնարհ,
Արքայի դեմ, ապա կանգնեց
Հպարտ, ինչպես Սասունասար,
Խրոխտ, ինչպես Տավրոսը մեծ:

Հագավ իսկույն շող ու շառաչ
Հանդերձանքը. գլխին դրավ
Սաղավարտը ոսկեճաճանչ,
Կրծքին կապեց ճոշան-զրահ:

Կապեց լայնշեղբ սուրը ուղմի,
Առավ վահանն ու թիկնոցն իր,
Ու դաշտ իջավ պատերազի՝
Հուր նժույգով բոցակարմիր:

Ու յոթը օր ծանրո թնդաց
Կիլիկիայի հողն հեալով.
Ու յոթը օր գիլ զրընգաց
Կուռ վահանը կոփկոփելով:

Ու յոթը օր, յոթը գիշեր
Իրար գլխին թափեցին բարկ,
Իրար մարմնին խրեցին խոր՝
Արյունաթոր նետ ու նիզակ:

Սարի նման վեր բարձրացավ
Մարդկանց դիերը—դաշտերում:
Մինչև Սսի բերդը հասավ,
Որ մխրըճված է ամպերում:

Նայեց Մանչակը սևակնած
Խառնիխուժան զորքին իրա.
Ու նստեց մի ծանրը կասկած
Չարությամբ լի սրտի վրա:

— Զո՛ւր է, փնչաց—գոռ ամիրան,—
Թե գա նույնիսկ ուժըս ետին՝
Անհնա՛ր է հաղթել նրան՝
Այդ քաջ գյավուր Լիպարիտին:

Ասաց. ապա գլխակորույս
Դարձավ հողն իր, պարտված, վհատ:
Կանչեց հազա՛ր ճերմակմորուս,
Կանչեց հազա՛ր անմորուս մարդ:

Կանչեց հազա՛ր դեռ անպսակ,
Կանչեց հազա՛ր նոր պսակված,
Կանչեց հազա՛ր մանկահասակ,
Ու գրոհեց ափից ելած:

Ու նորից նոր, խառնիճադանչ,
Մեծ բանակով, սարսափելի,
Եկավ չոքեց Սսի առաջ,
Ինչպես երկյուղն անեղ մահի:

Նորից սարսեց Կիլիկիալի
Ծեր թագավորը Կոստանդին,
Սիրտը՝ ախուր, աչքը՝ անի,
Նորից կանչեց Լիպարիտին:

Եվ եկավ նա, գարմը քաջանց,
Վստահամիտ և անայլայլ,
Ինչպես արևը ճառագած,
Որ մուխ սարին տալիս է փայլ:

Եվ ողջունեց պալատը ողջ
Հիացմունքով մեծ քաջին յուր.
Նրա՛ն, որի ձեռքն անդողդոջ՝
Հաղթանակնե՛ր է քաղել բյուր:

Նրա՛ն, որի գլուխը քաջ
Չի կորացել ոչ մի անգամ
Ոչ մի մարդու սրի առաջ,
Ոչ մի տեղի երկաթագամ:

Եվ թագավորը դողդոջուն՝
Ջերմ համբուրեց ուրախառիթ
Թուխ ճակատն ու ասաց.— Ողջնւն,
Արի ասպետ, քաջ Լիսյարիտ:

Փանօք, հազա՛ր փառք պապերիդ մեծ,
Որ, Սասունի օրրանում հին,
Քեզ նման մի հերոս ծնեց
Եվ նվիրեց Կիլիկիային:

Որդիս, ահա կրկին անգամ
Բարձրացել է Մանչակը չար.
Եկել է նա կրկին անգամ
Մեր երկիրը տալու ավար:

Եկել է նա ահա կրկին.
Ավազին ու աստղին թիվ կա,
Բայց թիվ չկա նրա զորքին,
Նրա խուժդուժ զորքին ազահ:

Լիպարիտը ծնկեց խոնարհ,
Արքայի դեմ, ապա կանգնեց
Հպարտ, ինչպես Սասունասար,
Խրոխտ, ինչպես Տավրոսը մեծ:

— Մի տագնապիր, հանր իմ, այդպես,
Ծանր է վայրկյանը չարաղետ.
Գիտես և դու, գիտեմ և ես,
Հեշտ չէ՛ կովել Մանչակի հետ:

Մեծ է կա՛մքը, հույսը՝ կարո՛ղ,
Ել՛, ոգի ա՛ռ, գոտեպնդվի՛ր.
Դու—գեթ մի օր—բերդը տանող
Մեծ կամուրջը անառ պահիր:

Թե Մանչակը լինի կայծակ՝
Մենք կլինենք ապառաժ սա՛ր,
Կկանգնենք քաջ ու համարձակ՝
Կռիվներում անհավասար:

Թե Մանչակը լինի հեղեղ՝
Մենք կլինենք ամբարտակ-թումբ.
Կկանգնենք մեկ ու միատեղ՝
Կռիվներում արյունախում:

Յնձաց հույսով պալատն Հայոց,
Յնձաց Սիսը մալրաքաղաք.
Եվ հորդեց գորքը ալեկոծ
Գրոհներով բարձրադադակ:

Ու լոթը օր ծանրը թնդաց
Կիլիկիայի հողն հեալով.
Ու յոթը օր գիւ զրընգաց
Կուռ վահանը կոփկոփելով:

Ու լոթը օր, յոթը գիշեր
Իրար գլխին թափեցին բարկ,
Իրար մարմնին խրեցին խոր՝
Արյունաթոր նեա ու նիզակ:

Մարի նման վեր բարձրացավ
Մարդկանց դիերը դաշտերում.
Մինչև Սսի բերդը հասավ,
Որ մխրճված է ամպերում:

Կենտրոնից կուռ՝ գրոհեց հորդ
Լիպարիտի գունդը անահ.
Իսկ ձախ թևից, Մեծ Բերդի մոտ,
Կոստանդինը կամրջապահ:

Կամո՛ւրջը, այդ ա՛նցքը միակ
Սսի սիրտն էր տանում գեպի.
Ուր խորդում էր արցունկզակ
Թշնամի գորքը գետափի:

Հրեշավոր հոնդյունով,
Ցրված, ցանցառ, խիտ-խիտ, խումբ-խումբ,
Դեպի կամուրջն, ինչպես մութ ծով,
Մակընթանում էր թմբից-թումբ:

Կաս կարմրրեց կամուրջը քար,
Կաս կարմ, ըեց ջուրը գետի.
Ու գարկեցին անվերջ իրար
Մութից մինչ լույսն առավոտի:

Առավոտի լույսից մինչ մութ
Հեղեղեցին բոց ու կրակ.
Խող մունչաց Մանչակն անգութ
Հանց վիրավոր վարազը բարկ:—

— Ձեռ դիմանա, դո՛ւ, Կոստանդի՛ն,
Պիտի առնեմ կամուրջն այդ ես.
Այնժամ քո քաջ Լիպարիտին
Մորթեմ պիտի մի հավի պես:

Շուտով կզգա՛ թափն իմ զարկի,
Շուտով քաջիդ քո աննկուն
Գանգը կտամ սուր նիզակի՝
Տարսոնի մեծ հրապարակում:

Ասաց. յղեց զեպի կամուրջ
Խառնախռիվ նոր նոր խմբեր.
Բազմություններ հողմամուռնչ,
Կուրնչացող բազմություններ:

— Է՛, Կոստանդի՛ն, առյուծըդ ծեր,
Ամուր պահի՛ր կամուրջը փակ.
Թե չես ուզում թագըդ դնել
Ամիրայի կեռ թրի տակ:

Ամուր պահի՛ր... Զիլ կանչեց քաջ
Լիպարիտն ու ինչ արծիվի՛
Սուր սլացավ դեպի առաջ,
Տրորելով զորքը դեմի:

Ու կոտորեց նա աջ ու ձախ
Բոցակարմիր նժույզի հետ:
Բայց մի թաքուն կասկած ու վախ
Ծագեց պահին այդ չարադետ...

Թե չպահի կամուրջը նա՛
Կառնի Սիսը Մանչակն անգութ.
Եվ հրաժեշտ իմ Կիլիկիա՛,
Հրաժեշտ քեզ, իմ ժողովուրդ:

Ամուր պահիր... կանչեց հեռվից,
Շողացնելով սուրը հատու:
Շրջվեց տեսավ, գայրույթալից
Ամիրալի Ասիդ որդուն:

— Կովե՛նք, գլավո՛ւր, ասաց նա խիստ,
Ասիդ հսկան հաղթամարմին.
Իսկական քաջն հայտնի է միշտ
Ո՛չ տանը, այլ կովի ժամին:

Ու ձգվեց մի բիրտ շարժումով,
Ինչպես հորձանքն ելման գետի,
Ջախջախելու մեծ վահանով
Քանգը Ասպետ Լիպարիտի:

Ու երկուստեք՝ զենք ու զրահ
Շառաչեցին, ու մոլեգնած
Կրծոտեցին ձիերն իրար,
Իրար ընդհուպ ու ծառայած:

23777
A I
ԿԻՆԳ
ԳՅՄԿ



Մերթ մղվեցին ետ իրարից,
Երկու տաք մարդ, երկու տաք ձի.
Մերթ մոտեցան ընդհուպ նորից
Զրահներով կոռ պղնձի:

— Քա՛ջ ես, Ասի՛դ... բալց քաջությանն
Հարկավոր է նաև հնար.
Ի՞նչ կասես դու, եթե հիմա
Քեզ մեկից մեկ գլորեմ վար:—

Պատրաստ եղիր: Ահա և քեզ:
Ու վահանովն իր ծանրագին,
Հիպարիտը, սի ժայռի պես,
Վար գլորեց գոռ Ասիդին:

— Հա՛, հա՛, հա՛, հա՛: Քա՛ջ ես: Դե՛, ա՛ռ:
Ա՛ռ, և ասա քո Մանչակին,
Թե կարենա գանգըդ խելառ
Հաստ ուսերիդ պահել կրկին:

Ասաց. ձգեց սուրբը շողշող,
Կտրեց նրա վիզը մտտ.
Խառնըվեցին արյուն ու հող
Խրխնջացող նժույզի մոտ:

— Իմ ետևի՛ց, քաջե՛ր, առա՛ջ:
Կանչեց ասպետն արի ձայնով.
Եվ գործը նոր ոգի առած
Սուրաց դիեր կոխտեսլով:

Եվ հորդեցին արձակ դաշտում
Մարդիկ, ձիեր—քրտինքում կեղ.
Եվ երկնքի բաց ոլորտում
Կանգնեց փողին գորշ ծովի պես:

Նետով, տեգով, սրով լայնշեղբ
Կոտորեցին իրար անհաշտ.
Որոտացին հովիտ ու ձերպ,
Որոտացին լեռինք ու դաշտ:

Եվ մըըրկի մեջ այդ դժնի,
Մորուցքի մեջ այդ խելահեղ՝
Նա միտ բերեց Կոստանդինի
Եվ կամուրջի վիճակը նեղ:

Ու ետ նայեց... օ՛, ի՛նչ սարսափ,
Ի՛նչ մեծ օրհաս, ի՛նչ մեծ աղետ,
Զորքը թողած կամուրջ, գետափ,
Նահանջում էր դեպի Մեծ Բերդ:

— Անմիտ ձերուկ, հե՛շտ բացեցիր
Հալըենիքիդ դարբասը լայն.
Քա՛նի անգամ քեզ ասացի՝
Զլսեցիր դու ինձ սակայն:

Կորավ ամեն, օ՛, ամեն ինչ,
Ազատությունը մեր կորա՛վ.
Խնդա պիտի չարաքրքիջ
Թուրք ամիրան արյան ծարավ:

Նրբ կկանգնի նա գերու պես
Ոտքերիս մոտ, աչքիս առաջ,
Ա՛յն ժամանակ կասեմ, որ ես
Կիլիկիայի հողը առա:

Զորականնե՛ր, Սիս բերդը ձեզ,
Ավարն ամբողջ ձեզ եմ բաշխում:
Նրան պիտի ո՞ղջ տեսնեմ ես,
Լսո՞ւմ ես դու, իմ քաջ Արխուն:

— Լսո՛ւմ եմ քեզ, տիեզերքի
Անիվ, առանցք և արեգակ.
Կբռնեմ այդ օձի ձագին
Եվ քաջ կտամ ոտքերիդ տակ:

Ու քշեց ձին Արխունն աջնժամ
Քաղաքից դուրս, զորքով անվերջ.
Ու նոր կռիվ ծագեց դաժան
Նրա զորքի և հայոց մեջ:

Մի խուճբ քաջեր՝ մի քաջի հետ՝
Կանգնեցին մի մարդու նման.
Մինչև վերջին նիզակ ու նետ,
Մինչև վերջին կաթիլն արյան:

Մարտնչելով մեռան նրանք,
Մեռան և՛ լուռ, և՛ ցավազին:
Լիպարիտը մնաց մենակ,
Մենակ զարկեց թուրքի զորքին:

Շառաչեց իր ձիով կարմիր,
Շառաչեց իր անկոր տեգով.
Շառաչեց իր սրով ու գամի
Ու վահանով իր ծանրակող:

Սակայն ահա օղակն ամուր,
Սեղմ նեղացավ իր չորս թևի.
Ու քառասուն զինված ուրուր՝
Շուրջկալեցին մի արծիվի:

Շուրջկալեցին, և նժույզից
Վար բերեցին, և զինաթափ՝
Քաշ տվեցին ազատ դաշտից՝
Չեռքն ու ոտքը շղթայակապ:

Ու գնաց նա, գնաց լուին
Մայր քաղաքով մթնած, մեռած.
Ու տեսավ թուրք ամիրային,
Ոտքերին մոտ, աչքի առաջ:

— Է՛յ, դո՛ւ, զյալնուր, շուն, շանընկեց,
Ռուր աի պահես էլ քո մորթին:
Այդ դո՛ւ ես, հա՛, որ սպանեց
Միակ որդուս, քաջ Ասիդին:

— Ե՛ս եմ, այո՛, դեւերի դե,
Մի մորլտա, չե՛ս վախեցնի.
Կոստանդինը չլիներ թե՛
Ես քո առաջ չէի կանգնի:—

Գրավեցիր դու կիլիկիան
Ո՛չ թե խելքով, ո՛չ թե զենքով,
Ո՛չ թե ուժով հսկայական,
Այլ մի ծերի սխալանքով:

— Ոչ թե ուժով, հեղնում ես ինձ:


— Հեղնում եմ քեզ, մեծ սրիկա.
Ծառերն ընկնում են անտառից,
Բայց մշտագոյ անտառը—կա...


Հերսից դողաց Մանչակը չար,
Աչքն արյունոտ, դեմքը՝ դժգույն:
— Գահի՛ճ, սրա գլխի համար
Նիզակ ցցիր հրապարակում:

Ասաց. նստեց բարձրը դրված
Գահի վրա իր թանկագին.
Նայեց ավեր, ավար տրված
Լուռ ծխացող Սիս քաղաքին:

Մինչ խաժուժուժ, արյան ծարավ,
Ճիրանավոր մի բազմություն,
Գաջին դեպի մահը տարավ,
Տարավ դեպի անմահություն:

1943





ՎՖ 00604: Պատվեր 184: Տիրաժ 3000. $\frac{3}{4}$ տպագրական
մամուլ: Ստորագրված է տպագրության
1/VI 44 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան, 1944

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0047269

(104.) 9628 2 n. 50 4.

A $\frac{I}{9474}$